

Եսայի Հասան Զալալեան

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱՌՕՏ
ԱՂՈՒԱՆԻՑ
ԵՐԿՐԻ



eMatenadaran.

Հասան Ջալալեան

**Պատմութիւն համառօտ
Աղօւանից երկրի**

Զալալեան Հ.

Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի / Հ. Զալալեան —
«Aegitas»,

1916-1920-ին հրատարակել է «Իմ հորաքույրը» (1916), «Տոնոն» (1917) սոցիալական վիպակները, «Ողբ անմահության» (1916), «Արեւելք» (1918) պոեմները, «Դոկտոր Բուրբոնյան» (1918) երգիծական վեպը, արձակ բանաստեղծություններ, բանասիրական ու գրականագիտական հոդվածներ, որոնց մեջ արտահայտված է Թոթովենցի մտահոգությունը հայ ժողովրդի ազգային-քաղաքական ճակատագրի նկատմամբ: «Նոր Բյուզանդիոն» դրաման արժանացավ համամիութենական մրցանակի, թարգմանվեց, բեմադրվեց շատ տեղերում, այդ թվում եւ Փարիզում: 1929-1936 թթ. Թոթովենցի ստեղծագործական կյանքի առավել արգասավոր շրջանն է. լույս տեսան «Ամերիկա» (1929) պատմվածաշարը, «Աղավնիներ» (1934), «Բաց կապույտ ծաղիկներ» (1935) պատմվածքները եւ շատ այլ գործեր: Անդրկովկասում դարասկզբի հեղափոխական իրադարձություններն են արտացոլված «Բաքու» (1930-1934) եռափառ վեպում, որին բնորոշ է ժողովրդի կյանքի լայն ընդգրկումը, նրա պատմության, կենցաղի ու ազգային նկարագրի ռեալիստական պատկերում:

Содержание

Առաջաբանութիւն	5
[Ա]	7
[Բ]	9
Конец ознакомительного фрагмента.	10

Եսայի Հասան Զալպեան

Պատմություն համառոտ Աղուանից երկրի

Առաջաբանություն

Ոմանք յառաջին՝ սանաւանդ թէ յոլովք ի նախկին կորովամիտ իմաստուն եւ քաջ նաեւ ի սուրբ արանց յառաջ բերեալ իրաքանչիւր դարուց եւ ժամանակաց գեղեալ եղեալ իրաց պատմութիւնս հոգեւորաց եւ մարմնաւորաց, շարադրեալ թողին ինքեանց առյապապս եկելոց ի յիշատակ եւ ի գգուշութիւն: Որոց զանուանս նոցին ոմանց արանց լուեալ մեր շարագրեցաք աստ սակս պատճառաց երկուց: Նախ՝ զի դիտաւորութիւն բանիս առ պատմութիւնս ներկայիս է՝ յորում ենքս. որոյ նիւթ բանից եւ շարադրութիւն բառից ի նոցին ուսեալ գոլով գրոց, մի լիցուք ապերախտ նոցին երախտեաց՝ արտաքոյ թողով զանուանս արանցն երախտաւորաց: Եւ երկրորդ՝ ի նոցանէ թէպէտ ոմանք ի յագգէ Հրէից էին եւ ի հեթանոսաց, եւ ոմանք յայլագգ քրիստոնէից՝ այսինքն Յունաց, Ասորոց եւ Լատինաց, եւ այլք ի մերս Հայոց ազգէ. սակայն բանք եւ վիպասանութիւնք նոցա ոչ՝ է թարց շնորհաց ամենագոր Հոգւոյն սրբոյ Աստուծոյ. որոյ այսօր տօնախմբութիւնս է ի գլովս յոբելեանի պենտեկոստէիս: Ընդ որոց եւ ես յուսամ ընդունել կաթիլ մի յառատ պարգեւաց այնմ պարգեւատուի՝ որ ոչ՝ գշրեայս եւ զհեթանոսս խտրել եւ ոչ զԵթովպացիս որոշել եւ ոչ ի դաւանողաց իւրոց արժանաւորաց եւ յանարժանից խորշի, որպէս զի շնորհիւ նորին յաւարտ հասից տկար մտօք սկսելոյ տրակիս:

Արդ՝ որպէս վերագոյնդ խոստացայ զանուանս առաջնոցն, են այսոքիկ: Նախ՝ Ափրիկանոս, Յեսով, Չեքեսիպոս, եւ Յովսէպոս հրեայք եւ Նոննոս կրօնաւոր, Եւսեբիոս, եւ Զովսիմոս, Փաստոս Բիւզանդ, եւ Զենոբ յունաց. Սոկրատ, եւ Թէոդորիտոս, Յովհաննէս՝ Ճեպելո, եւ Թէոդորա, Յովհաննէս Ասիացի եւ Կորայ իմաստուն, Յակովբ Ուրհայեցի, Դիոնեսիոս սարկաւազ, եւ Իգնատիոս եպիսկոպոս Անտիոքայ, Սիւրայ երէց, եւ Յովհաննէս ի Քեսնոյ, Դիոնէսիոս Սալիպայ որդի, եւ Միխայէլ պատրիարք Ասորոց:

Իսկ ի մենջ եւ յագգէս Հայոց՝ կորովին Ագաթանգեղոս, եւ այրն Աստուծոյ Մովսէս Խորենացի, Եղիշէ սուրբ վարդապետ, եւ Ղազար Փարպեցի, Թովմա վարդապետ Արծրունի, եւ Շապուի Բագրատունի, Յովհաննէս կաթողիկոս Հայոց, եւ Մովսէս Աղուանից պատմագիր Կաղանկատուացի, Ուխտանէս եպիսկոպոս Ուրհայոյ, Ստեփաննոս վարդապետ Աստղնիկ, Առիստակէս վարդապետ Լաստիվերտցի, Մատթէոս վանաց երէց Ուռհայոյ, Մամուէլ քահանայ կաթողիկէին Անոյ, Վանական վարդապետ Տաւուշոյ, եւ Կիրակոս վարդապետ եւ Վարդան նորին աշակերտք: Ապա հուսկ վերջին եւ հուպ ի յետինքս Առաքել վարդապետ Դարիժեցի, որ ունի պատմութիւնս ամաց իբրեւ վաթսուն եւ հնգից, սկսեալ ի ՌԾ թուէն մինչեւ ի ՌՃԺԵ թիւն հասեալ դադարել: Արդ՝ եթէ գոն այլ ինչ պատմութիւնք ի մէջ մեր եւ կամ այլ ազգաց, թողաք զայն ի գիտունս նոցին եւ զայս միայն յիշեցաք գոր ի գիրս մեր գտաք:

Եւ արդ՝ սոցին աստ յիշեցելոց արանց ոմանք, սկսան որ առաւել հմտագոյնքն էին, ի Ստեղծողէն զարարածս, եւ ի նախկին մարդոյն Ադամայ, եւ ոճով ինն անցանելով ընդ դարս եւ եւ ընդ ժամանակս, եւ աւարտեալ մինչեւ ի յինքեանց իսկ կեանս: Իսկ ոմանք ի նշանաւոր դարուց եւ ի քաջագոր թագաւորաց եւ ի սքանչելի արանց սկիզբն եղեալ են զբանս իրեանց, եւ այսպէս իրաց ինչ եղելոց մեծամեծաց եւ փոքունց, եւ այլ եւս ի բռնակալաց արանց եւ ի գոռոգաց տիրողաց, եւ ընդ հաւատոյս Քրիստոսի եւ եկեղեցւոյ նորին մրցողաց, եւ հերձուածողաց ամբարշտաց, եւ նեղութեանց ժամանակաց: Նաեւ խաղաղարար եւ բարեպաշտ թագաւորաց եւ իշխանաց, աշխարհի շինութեանց եւ եկեղեցւոյ բարեկարգութեանց, եւ թշնամեաց յաղթութեանց. եւս շարայարեալ են ընդ պատմութիւնս զանազան եւ հիացուցանօղս արժանիս լսելեաց, եւ հասուցեալ են մինչ առ իրաքանչիւր ժամանակս՝ առ ի խրատ եւ յօգուտ եւ ի գգաստութիւն յետագայիցս: Որպէս զի բարեաց արանց

նախանձաւորքն ընդ բարիսն գովեսցին, եւ չարքն եւ արհամարհեալքն ընդ նախկին չարեացն արհամարհեալք արտաքսեսցին:

Այլ արդ՝ եղբարք իմ սիրեցեալք ի տէր, քանզի նոքա ի ժամանակս տէրութեան քրիստոնէից թագաւորաց եւ իշխանաց բարեպաշտից գլով, եւ կամ թէ ընդ իշխանութեամբ այլազգեաց բռնաւորաց անկեալ, որք թէպէտ թշնամիք օրինաց են, այլ կամին շինութիւն եւ խաղաղութիւն աշխարհի եւ յովութիւն ռամկաց վասն օգտի իրեանց, այնքան աղէտս եւ կսկիծ եւ տառապանս, եւ աղաղակ, եւ ամբաստանութիւնս տրտնջանօք հանդերձ գրեալ են ի պատմութիւնս իրեանց, որ եւ քաջայայտ իսկ է ձերում իմաստութեան: Ապա ո՞րչափ եւ քանի՞ցս եւ քանի՞ պատիկ պարտինք մեք ողբալ եւ հառաչել եւ աւաղել գողորմելի կեանս մեր եւ երկոքումքք ձեռօք հարկանել գգլովսս, եւ վա՛շ կարդալ գկորստեամբք մերովք, որ ոչ միայն ի թագաւորաց մերոց եւ իշխանաց գրկեցաք, այլ եւ յայլազգի գոռոզաց եւ ի բռնակալաց, որ ակամայ կամօք հաճեալ եւ հնազանդեալ էաք ընդ տէրութեամբ նոցին (մնալ) բազում ժամանակս: Որք թէպէտ հակառակ էին եկեղեցոյ եւ օրինաց սրբոց, այլ ոչ իսպառ դիմամարտէին: Եւ թէպէտ կեղեքէին, եւ կողոպտէին գկեանս մեր, այլ ապահով եւ խաղաղ եւս պահէին գմեզ յարտաքին եւ յօտար թշնամեաց եւ յաւարչաց: Զնոսին եւս եքարձ տէր Աստուած մեր յերեսաց իւրոց եւ ի մէնջ. եթէ վասն անկշռելի եւ անչափելի եւ անհամար մեղաց մերոց էր որում յաւէտ արժանի ենք՝ գոր կրեմքս, եւ եթէ յաղագս չափոց իրեանց լրմանն՝ որ անցեալ էին քան գշափ բնութեանս մարդկան եւ օրէնադրին իրեանց յափշտակութեամբ, գրկողութեամբ, կաշառառութեամբ, պղծագործութեամբ, եւ ամենայն իրօք չարեօք, թերեւս արժանն տարաւ ի տեղի հատուցման, որ չեղելոց գգործսն քննէ, եւ գզգոյն իբրեւ գգոյ կոչէ. նմա միայնոյ է գիտելի, եւ կարող է հատուցանել գհատուցումն նոցա նոցին:

Այլ դուք ո՞րով եղանակաւ եւ կամիք ընտրեցէք. բաց ի մեզ եհաս եւ կատարեցաւ հրաման Տեառն մերոյ եւ Փրկչին՝ թէ եւ տարադէպ է ինքեան, եթէ՝ «Չարից գիովին եւ ցրուեսցի հօտն: Այսպէս եղեւ եւ մեզ. գի յնտանի հաւատակից հովուաց վաղ ուրեմն էաք գրկեալք, այժմ յօտարահաւատ եւ յայլակրօն տերանց եւս մեկուսացաք. եւ եղաք իբրեւ նաւաբէկ ոք որ ի մէջ կոհակացեալ ալեաց ծովուն տարաբերի ոտիւք եւ ձեռք, եւ ոչ ուստեքէ լինի փրկութիւն: Քանզի եւ ես այսպէս գիտեմ՝ թէ՛ ի հնումն եւ թէ ի նորումս սուրբ հարքն որքան ողբք եւ սուգ գոր ասացեալ եւ գրեալ են, զայն նախագիտութեամբ վասն այսր ժամանակիս է, եւ վասն մեր՝ եւ ոչ իրեանց: Վասն որոյ ոչ կարեմ տալ լոռութեան. թէպէտ հային եւ չափեմ գկարողութիւն անձին իմոյ, եւ տեսանեմ յոյժ տկար եւ անիմաստ եւ յոռի քան զամենայն մանկունս եւ զպաշտօնեայս եկեղեցոյ, եւ քան զուսումնակիցս իմ եւ ընկերս ըստ ժամանակիս, մանաւանդ թէ մեղօք զառաժեալ եւ թշուառական կենօք զբաղեալս. սակայն հային ի քաջսն եւ ի գիտունսն քան գիս, գի լոռեալ յայսմ ամենայնէ անփոյթ առնեն, եւ հարկանելոյ սրտիս ոչ տոկալ այսմ անտանելի աղետիս, այլ յուսացեալ յամենագօր աջ Տեառն եւ յառատաձիր պարգեւս Հոգւոյն՝ որ խլից լսել տայ, համերց խօսել, եւ արժանատր աղօթիւք Տիրուիւոյ Կուսին, եւ Կարապետին սրբոյ, եւ ի լոյս ածողին գմեզ բազմերախտ հօրն մերոյ մեծին Գրիգորի, եւ ամենայն սրբոց եւ եղբարց սրբանուէրից, արկի գանձն իմ ի հոգս գործոյս այսորիկ մտատանջի, վստահացեալ ոչ թէ ի կարողութիւն իմ՝ այլ ի սէր սրբասէր եւ հեգաբարոյ եղբայրութեան ձերոյ: Վասն որոյ հայցեմ եւ ժտեմ խոնարհաբար գիջանել ըստ աշակերտացն Տեառն, մանաւանդ թէ աղօթիւք օգնել, եւ մի՛ քամահելով եւ պոստելով գանց առնել, գլով եւ ձեր կարեկից եւ բնութենակից մեզ ըստ բնութեան. գի եւ ի գիրս աստուածայինս ի յովով տեղիս մարդասիրութեամբն իւրով իրք նուաստ առաւել յարգի եւ գովի՝ քան զառաւելն եւ գմեծամեծս: Եւ վասն խորանին վկայութեան սպասու այժեայս եւս նուիրեցին ընծայաբերքն, եւ Տէրն իսկ գովեաց գլումայս այրոյն. եւ գունակ նմին եւ ես աղերսեմ ընդունել գմեզ գտրակս գայս իբրեւ գնոյն. որ իբրեւ ի մէջ գիշերի քանձրամած խաւարեալ վերջացեալ ժամանակիս հագիլ թէ այսքանս ընձեռել կարացաք ապագայից ընթերցասէր եղբարցդ, ի փառս Հօր եւ Որդոյ եւ սրբոյ Հոգւոյն, եւ ի յօգուտ լսողացդ:

Ն. Ծ. Աստուծոյ

Կաթողիկոս Աղուանից՝ Տէր Եսայի Հասան Զալալեանց

[Ա]

Ընդ ժամանակս թագաւորութեան ազգին Պարսից՝ որ են կրօնիւք մահմեդականի, յորում տիրէին բռնակալութեամբ սկսեալ ի Կովկասային լեռնէ, եւ ի յեզերաց Կասպիական ծովուն, (որ Երկաթի դուռն կոչի), մինչեւ ի Մազանդարան եւ Աստարապատ. եւ անտի սահմանօքն Յօգպեկու, հատեալ ի Խորասան, եւ ի Ղանտահար բերդ, եւ անտի ձգեալ յեզր ծովուն Հնդկաց ի Բանտար քաղաք եւ այսր ի Շիրագ. եւ միջոցաւ երկրաւ հասեալ մինչեւ ի Բաբելոն (այսինքն՝ Պաղտադ) անդէն եւ այսր հատեալ սահմանօք հասեալ մինչեւ ի Համատան եւ ի ծովն Վանայ. յորմէ եւ սահմանօքն Մարաց հասեալ ի Խոյ եւ ի Սալմաստ. եւ ի Նախշաւանաւ հատեալ ի յԵրասխ գետ, եւ անտի Մահաթի Կադգուանաւ եւ Կողբաւ անցեալ ի գետն Ախուրեան՝ որ կոչի Արփայ-չայի: Եւ անտի անցեալ Ղադղուի անուամբ նահանգի եւ ի սահմանս Վրաց ի Տփլիս քաղաք եւ ի Կախէթ՝ իւրովք բոլոր թեմիւք եւ թումանօք: Եւ ապա հատանի ի լեռն Կովկասու, դարձեալ ի նոյն ամուրն Հունարակերտ, (այսինքն՝ Դարբանդ) եւ ի տեղի կայից գլխաւորի լեռնորդացն, գոր Շամխալն անուանեն, եւ անուն տեղոյ նորին Թարխու կոչեցեալ: Արդ՝ ի յայս միջոցի ծոցոյ երկրիս արեւելեայց խառն ընդ հարաւ եւ ընդ հիւսիս կողմանս Եւրոպիոյ՝ տիրեալ էին ազգն Պարսից, որ Ղզրլաշն կոչիւր, ունելով զաթոռ եւ զգահ արքայութեան իւրեանց զամենահոշակ արքայանիստ մայրաքաղաքն Շօշ, (այսինքն է՝ Ասպահան. եւ անդ կալով թագաւորացն՝ տիրեն եւ իշխեն վիճակեալ իւրոց հնազանդելոց ազգացն ձգեալ յաշ եւ յահեակ գրեւս իշխանութեան իւրեանց:

Այլ արդ՝ աստանօր տարակուսիմք սակս նախնի ցեղապետութեանց՝ թէ յորմէ ազգէ եւ ծննդոց սերեցան տքա թագաւորացունք, եւ կամ յորմէ հետէ յառաջացեալք եղեն. քանզի սրբագան հայրն մեր Մովսէս քերթողն հաւաստէ մեզ այսպէս, եթէ «Արշակ քաջ պարթեն վանեալ Մակեդոնացիսն՝ զղայեակորդիսն Աղէքսանդրի, որ ամս վաթսուն եւ կամ աւելի կալեալ ունէին գթագաւորութիւնն Պարսից, որ եւ գեղբայրն իւր Վաղարշակ երկրորդ իւր կարգեալ՝ թագաւոր ի Հայս առաքէ: Եւ այսպէս ի միոյ ցեղէ եղեալք երկուց ազգաց Պարսից եւ Հայոց թագաւորք պարթեւքն՝ մինչեւ ի ժամանակս Սասանականին Արտաշրի սպանանելոյ զԱրտաւան արքայ Արշակունի. եւ ինքն կորցեալ գթագաւորութիւնն Պարսից. եւ ազգաց տիրեաց մինչեւ յերեւումն Մահմետի, որ զկնի երեսուն կամ աւելի եւ պակաս ամի տիրելոյն իւրեանց, սպանին զՅազկերտ արքայ Պարսից, եւ տիրեցին նոցին իշխանութեան. յորմէ տիրապետեալ ոմն Մահմուտ անուն բռնացեալ ի Բահլ, եւ անտի մինչեւ ի Խորասան. եւ ապա փոխանակելով զմիմեանս յառաջացեալ առին զՀռէ: Իսկ որդի Մահմուտին Մասխուտ անուն ի Հռէոյ Էառ զՆշապուր, զԽազուին, զԱսպահան, եւ զամենայն տունն Արաղու եւ զՔրտաստան. (այս ըստ սրբոյ վարդապետին Վարդանայ): Եւ ապա ասէ զսոցանէ՝ որդի զհայր փոխանակելով յերկար ժամանակս նստան ի Խազուին, որոց անուանք են այսոքիկ՝ Աբու-Ալի, Տաւութ, Չադրալէկ, Ապու-թալիպ, Տողրիլալէկ, որ զօրացեալ ի Խալիփայէն, եւ առեալ զիրաման եւ անուն սուլդանութեան, ընդարձակեաց զսահմանն իւր սկսեալ ի Խորասանայ՝ եւ զամենայն երկիրն Պարսից:

Զսա փոխանորդէ Արփապան եղբօրորդի իւր, եւ զկնի նորա Մէլիք շահ կոչեցեալ. եւ ապա Մահմուտ սուլդան, եւ յետ նորա Բաքարուլի. եւ որդի Մահմուտ սուլդանին Էհար զԲաքարուլիսն, եւ ինքն սուլդանացաւ: Եւ զկնի Մահմուտի որդի նորա. եւ Մանճար սուլդան ոմն սպանանէ զնա եւ առնու զիշխանութիւնն. եւ ապա Տաւութ որդի նորա. եւ զկնի Տողրիլ. եւ յետ նորա Մախսուտ. եւ ապա միւս Տողրիլ. զկնի որոյ Ալփապան, որ Էառ զԱնի քաղաք մինչեւ ի Վրաց տուն, որ եւ պատուեալ ի Խալիփայէն իւրեանց: Եւ այս Ալփապան փոխեաց այլվի Տողրիլ. եւ ապա Շահի Արմէն, եւ զկնի Ելտկուզ. զկնի որոյ Փահլաւան եւ Խզիլաւալան որդիք տրա՝ որ ի միասին տիրեցին աշխարհաց. եւ այս հասանի մինչեւ ի ՌԻՉ թիւս հայոց: Յայսմ միջոցի ոչ գտաք զորպէսն, բայց տոյն վարդապետ ասէ, թէ ի ՌՀԴ թոին եկն Թաթարն, եւ ի Խորասանու փախոյց զորդիս Խորագն շահին: Իսկ գալուստ Թաթարին՝ եւ փախուցանել զԶալալատին սուլդանն ի Խորասանայ, եւ յառաջ խաղալն առ մեզ, եւ յաղթելն եւ տիրելն

ամենայն երկրի. եւ վիճակելով ելանելն եւ առնուլն գտիեցերս, եւ պէս պէս չարութիւնք եւ գործք նոցին գոր անցուցին ընդ ամենայն ազգս արեւելից եւ արեւմտից, հիւսիսոյ եւ հարաւոյ, զայս ամենայն ուսուցանեն մի ըստ միոջէ Վանական, Կիրակոս, եւ սոյն Վարդան վարդապետք եւ պատմագիրք, որք եւ հասուցանեն մինչեւ ի ՉԺԵ թիւս զպատմութիւն բռնակալութեան սոցա. եւ զկնի ոչ գտաք գորքանութիւն ամաց իշխանութեան սոցա. եւ կամ թէ որով եղանակաւ բարձան, եւ ո՛վ որ էր որ հալածեաց եւ չքացոյց գնոսս յաշխարհէս մերմէ. եւ կամ ո՛րք էին որք տիրեցին եւ բռնակալեցան երկրին Պարսից. մինչեւ ասի ի ՊԼԵ թուին զայն Թամուրլանկին, որ եւ նա զազանաբար եկեր եւ մանրեաց, եւ զմնացորդսն առ ոտն եհար ըստ տեսեանն. եւ զամենայն տիեզերս ի հարկի կացոյց, սկսեալ ի Սմրդանտայ մինչեւ ցՍամարիա եւ ցԵգիպտոս, ժամս ուր եւ տասն մաշելով ի սուր զամենայն հասակ, եւ քայքայելով զեկեղեցիս ուր եհաս գնացք ոտիցն, որոյ զհանգամանս չարագործութեանն պատմէ քեզ Թովմա վարդապետ Արծրունի: Եւ զկնի սորին զալ Ղարայ Յուսուփ չարին ասէ ի ՊՕԵ թուին, եւ կերպակերպ չարիք նորին. զկնի որոյ ի ՊՀ թուին Շահռուխ ոմն կրկնաչարագոյն քան գնա երեւեալ, եւ ապա Զաղաթայն: Յետ այսորիկ Զհան շահն ազգաւ թուրք, որ թագաւորակերպ տիրեալ բոլոր երկրին Պարսից ի ՊԶԸ թուին. եւ զսա փոխանորդէ Եաղուր փառշահ որդի իւր, ի ԶԼԲ թուին հայոց:

Այս Եաղուր թագաւոր որ նստէր Դարեմ Շահաստանի, փեսայացոյց ինքեան ի քոյր իւր զԶէյա Հայտարն, որ էր որդի Շէխսեփուն, որ նստերն յԱրտաիլ քաղաքի: Այս Զէյա եղելոց սկիզբն եւ ազգն եւ որպիսութիւնն ոչ գտաք ուրեք թէ ո՛ր, կամ յորմէ ցեղէ յառաջացեալ բնակեցան աստ: Այս Զէյա Հայտարին ծնանի որդի մի գոր անուանեն Իսմայէլ, եւ վասն ոչ ունելոյ զաւակ Եաղուր թագաւորին, վասն որոյ Զէյան եւ կինն իւր խորհեցան հնարիւք իմն սպանանել զԵաղուրն, զի ինքանց եւ որդւոյ իւրեանց մնացէ ժառանգ թագաւորութեան. որ եւ արարին իսկ: Քանզի կոչեցին զնա ի պատճառս պատուոյ, եւ պատրաստեցին նմա կերակուր մահարար, եւ ի ճաշակելն նորա՝ իսկոյն զգաց. եւ ապա բռնի հրամայեաց ուտել եւ ինքեանց. եւ այսպէս ի միում ժամու մահացան թագաւորն եւ քոյր իւր եւ Զէյան. եւ յաղմկել զօրացն՝ զմանուկն Իսմայէլ փախուցին ի յԱղթամար կղզի. (այս ըստ Առաքել վարդապետի Դարիժեցոյ վիպասանութեան) եւ այսու զկնի զմիմեամբք ելեալ յառաջացան ի գահ իշխանութեան. որ եւ Սնխուր անուն ոմն բռնացաւ եւ տիրեաց, եւ հաստատեաց զաթոռ իւր յԱսպահան ի ԶԽԸ թուին. եւ յետ նորա Ալվանդն սուղ ժամանակաւ. որ եւ տեսեցին մինչեւ ի ԶՕ թիւն հայոց: Արդ որպէս ի գլուխ ճառիս խորշելով խոյս ետու ըստ կարգի եւ ըստ ազգաշարութեան ողջոյն զիտել եւ զրել զկարգ թագաւորութեանն Պարսից, որպէս արդի զհայր փոխանակեալ: Այլ այսքան միայն ի հնագիր պատմութեանց հաւաքեալ զանուանս երեւելի եւ նշանաւոր արանցն գոռոզաց եւ ամբարշտաց, հասուցաք մինչեւ ցայս վայր՝ ի զբօսանս եղբարց մերոյ սիրելեաց. եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն:

[Բ]

Արդ՝ որպէս ասացաք զսպանումն Եաղուր թագաւորին եւ շէխ Հայտարին, եւ փախուցանելն զմանուկն Իսմայէլ ի յԱղթամար կղզի, եւ զկնի ամաց ինչ զարգանալոյ տղային՝ աղմուկ շփոթի ոչ սակաւ լինէր տանն Պարսից եւ ապա միաբանեալ զօրագլխաց եւ զօրացն հասնեն զԻսմայէլն ի կղզոյն եւ թագաւորեցուցանեն ի յինքեանց վերայ ասելով, թէ սա է ժառանգ երկուց կողմանցն, այսինքն շէխին եւ գլով քվեր որդի Եաղուր թագաւորին, եւ սմա անկ է թագաւորութիւնն. վասն որոյ հնազանդեցան եւ երկրպագին նմա: Եւ նա ելեալ ի ՋԾ թոին, նախ հալածէ գլառաջ ասացեալ զԱլվանդն, եւ յինքն գրաւէ իշխանութիւնն. եւ ապա պատերազմեալ ընդ յաջ եւ յահեակ թշնամիսն զամս քսան եւ հինգ, ընդարձակէ զսահմանս իւր ըստ կարողութեան. եւ վարեալ զիշխանութիւնն՝ մեռանի ի ՋՀԵ թոին: Չկնի որոյ թագաւորէ որդի նորին շահ Թահմազ ի նոյն ամի, այր քաջ եւ արի: Սա յովով տեղիս արար ընդ իւրով իշխանութեամբ, որպէս զԱտրպատական եւ Վրաց աշխարհն բռնութեամբ հնազանդեցոյց. եւ ի կողմանս Խորասանու նոյնպէս ընդարձակեաց. նա եւ բազում կարգս ուղղեաց իշխանութեան իւրում եւ թեթեւութիւնս հարկաց, որպէս եւ ասեն: Եւ սա վախճանի ի ՌԻԴ թուականին, եւ փոխանակ կացուցանեն գորդին իւր Իսմայէլ անուամբ. որոյ կամեցեալ զբռնագլուխսն եւ զանհնազանդ խորամանկսն ի զօրագլխաց եւ զօրաց իւրոց բառնալ յերեսաց. իսկ նոցա աճապարեալ քան զնա ընդ փոյթ կենագրաւեն՝ որպէս ասի հնարիւք իմն մահացուցեալ. եւ զկնի սորին բերեն զեղբայր իւր Խոտապանտայ կոչեցեալ ի Խորասանայ, այր անարի, պակասեալ եւս ի յուսոյ. եւ սա եւս զամս սակաւս դաժանութեամբ եւ դառնութեամբ վարեալ զիշխանութիւնն՝ մեռանի. եւ ապա ի ՌԻԹ թոին որդի սորին Ապաս՝ կոչեցեալն Մեծ, շահ նստուցանեն ի Մաշատ. որ եւ ընդ սակաւ ժամանակս հնազանդեցոյց զշրջակայ թշնամիսն իւր, եւ ի բուն էառ զբոլոր երկիր հայրենի իշխանութեան իւրոյ. եւ ի Խորասանայ մինչեւ ցԵրասխ գետ եւ ցԲաղդատ՝ բաց յԱտրպատականէս:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.